5. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ամբիոնները կազմակերպում են ուսումնական խորհրդատուների (կուրատորների) ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներ:
6. Մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական խորհրդատուների թիվը սահմանում է Կենտրոնը՝ ելնելով տարբեր կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների թվի և ամբիոնների դասախոսական ներուժի համադրումից:
7. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն ամրագրված ուսանողների ուսումնական առաջընթացը նրանց ուսումնառության ողջ շրջանում:
8. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար (ամիսը 2 անգամ ) կազմակերպում խմբային և/կամ անհատական խորհրդատվություններ, ողջ աշխատանքային օրվա ընթացքում օգնում դասընթացների ընտրության և անհատական ուսումնական ծրագրերի կազմման գործընթացներում:

### **14. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները**

1. Ուսանողը պարտավոր է՝
  - ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,

- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
  - կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:
2. Ուսանողն իրավունք ունի՝
- – ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար Կենտրոնի կողմից առաջադրվող կամ ընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,
  - – միջբուհական փոխանակման և (կամ) ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),
  - – փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի,
  - շարունակելու ուսումնառությունը ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում՝ համաձայն գործող կարգի,
  - հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,
  - մագիստրոսի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող ավարտական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին ստանալու ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված՝ երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն:

## **15. Եզրափակիչ դրույթներ**

Սույն կարգը գործողության մեջ է դրվում 2019 թվականից՝ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրոսի կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների ուսումնառությունը կազմակերպելու համար:

## II ԲԱԺԻՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մաս I.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Բնապահպանության և բնօգտագործման ամբիոնը մագիստրոսի կրթական մակարդակում կազմակերպում է ուսուցում՝ «Բնապահպանություն և բնօգտագործում» ծրագրով.

## 1. Ուսումնական ծրագրի կառուցվածքը

Մագիստրոսի պատրաստման ծրագիրը բաղկացած է 2 հիմնական կառուցամասից՝ ուսումնական և հետազոտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են նախանշված ուսումնական կիսամյակներում՝ ուսումնական և հետազոտական կառուցամասերի կրեդիտներով արտահայտված ծավալների հետևյալ համամասնությամբ.

Կրթամաս	Կրեդիտներ	Դասընթաց-մոդուլների քանակը
<b>ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ</b>		
Լրացական դասընթացներ	0	3
Ընդհանուր կրթամաս	6	2
Մասնագիտական պարտադիր կրթամաս	45	12
Կամրնորական դասընթացներ	18	6
<b>ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ</b>		
Գիտական սեմինար	12	4
Գիտահետազոտական աշխատանք	18	4
Գիտահետազոտական պրակտիկա	3	1
Գիտամանկավարժ. պրակտիկա	3	1
Մագիստրոսական թեզի պաշտպանություն	15	1
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>120</b>	<b>34</b>

Կիսամյակ	I	II	III	IV	Ընդամենը
Ուսումնական կառուցամաս, կրեդիտ	25	25	22	0	72
Հետազոտական կառուցամաս, կրեդիտ	3	7	8	30	51
<b>Ընդամենը, կրեդիտ</b>	<b>28</b>	<b>32</b>	<b>27</b>	<b>33</b>	<b>120</b>

Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 20-շաբաթյա տևողությունը, որից 16-ը հատկացվում է տեսական ուսուցմանը և պրակտիկաներին, իսկ 4-ը՝ քննաշրջանին: Ծրագրի առաջին երեք կիսամյակների սկզբում մեկ շաբաթ հատկացվում է մագիստրանտի անհատական ուսումնական ծրագրի ձևավորմանը:

Մագիստրանտի շաբաթական լրիվ ուսումնական բեռնվածությունը կազմում է 1,5 կրեդիտ (24 կրեդիտ / 16 շաբաթ = 1,5) կամ 45 ժամ, իսկ ուսումնական կրեդիտի ժամային համարժեքը՝ 1 կրեդիտ = 30 ժամ: Մագիստրանտը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ: Ուսումնական ծրագրի լրիվ աշխատածավալը համապատասխանում է 120 կրեդիտի:

## 2. Ծրագրի բովանդակությունը

### 2.1. Ուսումնական կառուցամաս

Ծրագրի ուսումնական կառուցամասը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝ **լրացական դասընթացներ, ընդհանուր կրթամաս, մասնագիտական պարտադիր կրթամաս և կամրնտրական դասընթացներ**: Առաջին երկուսը ծառայում են մագիստրոսի կրթական աստիճանի ընդհանուր հենքի ապահովմանը կամ համալրմանը, երրորդ կրթամասը կազմում է մագիստրոսի ծրագրի բովանդակային էությունը, որն ապահովում է մասնագիտական գիտելիքների և կարողությունների անհրաժեշտ հենքը, իսկ չորրորդը՝ ծրագրի անհատականացված ուսուցման մասն է:

#### Լրացական դասընթացներ

Լրացական դասընթացների բաղադրիչն ուղղված է նախորդ կրթական աստիճանի պահանջներն անհրաժեշտության դեպքում լրացնելուն (մասնագիտության փոփոխության դեպքում կամ օտար լեզուների իմացության ոլորտում): Նկատի ունենալով մագիստրոսների՝ մասնագիտական և հետազոտական աշխատուժի միջազգային շուկայում ազատ տեղաշարժն ու պահանջվածությունն ապահովելու անհրաժեշտությունը, որպես պարտադիր լրացական դասընթաց՝ ծրագրում ընդգրկված է անգլերենը: Մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, գիտական ղեկավարի երաշխավորությամբ ուսանողի անհատական ուսումնական պլանում որպես լրացական դասընթաց կարող է ներառվել նաև օտար այլ լեզու: Բաղադրիչը յուրաքանչյուր մագիստրոսական ծրագրում նախատեսում է մինչև 3 լրացական դասընթացի առկայություն: Լրացական դասընթացները կրեդիտատար չեն:

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրե- դիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ) <sup>9</sup>	Կիսամ- յակ	Գնահատ - ման
18/M01	Անգլերեն լեզու 1	0	32/0	I	Ստուգարք
18/M01	Անգլերեն լեզու 2	0	32/0	II	Ստուգարք

### Ընդհանուր դասընթացների կրթամաս

Ընդհանուր կրթամասի աշխատածավալը 6 կրեդիտ է: Ընդհանուր դասընթացների առկայությունը ծրագրում նպատակառոտ դրված է մագիստրանտների մոտ փոխանցելի գիտելիքների և կարողությունների, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիական ունակությունների և մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը ապահովելուն: Այն ներառում է երկու պարտադիր դասընթաց՝ **Համակարգչային տեխնոլոգիաները բնապահպանական հետազոտություններում**<sup>9</sup> և **Մասնագիտության փիլիսոփայական հարցեր**: Առանձին դեպքերում, մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, մասնագիտական պարտադիր կրթամասին հատկացված ժամաքանակի հաշվին հնարավոր է նաև ընդհանուր այլ դասընթացների ընդգրկումը:

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրե- դիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամ- յակ	Գնահատ- ման ձևը
05/M06	Համակարգչային տեխնոլոգիաները բնապահպանական հետազոտություններում	3	32/24/8	I	Քննություն
16/M01	Մասնագիտության փիլիսոփայական հարցեր	3	32/0/0	I	Քննություն

### Մասնագիտական պարտադիր կրթամաս

Մասնագիտական պարտադիր կրթամասն ընդգրկում է 8-ից մինչև 16՝ երեքից հինգ կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթացներ: Կրթամասի ընդհանուր աշխատածավալը ծրագրում սահմանված է 48 կրեդիտ: Սա մագիստրոսական ծրագրի պարտադիր

<sup>9</sup> Այսուհետ՝ *դ* – դասախոսություն, *գ* – գործնական կամ սեմինար պարապմունք, *լ* – լաբորատոր աշխատանք

դասընթացների կազմն է, որն ապահովում է տվյալ մասնագիտացմամբ մագիստրոսի կրթական մակարդակում պահանջվող գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով մասնագիտական աշխատաշուկայի արդի կարիքները և պահանջմունքները:

Մագիստրոսական և ծրագիր՝  
**“Բնապահպանություն և բնօգտագործում”**

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
04/M01	Մենդամթերքի անվտանգություն և պաշտպանություն	4	32/24/8	II	Քննություն
04/M02	Կենսագործունեության անվտանգություն	4	32/24/8	I	Քննություն
04/M03	Մարդկային կայուն զարգացման հիմունքներ	4	32/24/8	I	Քննություն
04/M04	Արտակարգ իրավիճակների հիմնահարցեր	4	32/24/8	II	Քննություն
04/M05	Համալիր գեոէկոլոգիական քարտեզագրում	4	32/24/8	II	Քննություն
04/M06	Տարածական տեղեկատվական համակարգեր և կառավարում	4	32/24/8	III	Քննություն
04/M09	Շրջակա միջավայրի երկրաքիմիա	4	32/24/8	III	Քննություն
04/M10	Էկոլոգիական մոնիթորինգ և չափիչ սարքեր	4	32/24/8	I	Քննություն
04/M14	Էկոթունաբանություն	4	32/24/8	I	Քննություն
04/M18	Քաղաքային միջավայրի էկոլոգիա	4	32/24/8	II	Քննություն
04/M59	Բնօգտագործման էկոնոմիկա	4	32/24/8	III	Քննություն
04/M61	Շրջակա միջավայրի ռադիացիոն պաշտպանություն	4	32/24/8	III	Քննություն

**Կամընտրական դասընթացներ**

Կամընտրական դասընթացներն ընտրվում են Կենտրոնի այլ մագիստրոսական ծրագրերի դասընթացներից և նպատակ ունեն մագիստրանտի մոտ ձևավորելու մագիստրոսական թեզը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ: Այս դասընթացների ընդհանուր աշխատածավալը ծրագրում սահմանափակված է 18 կրեդիտով, իսկ կազմն ընտրվում է ուսումնական խորհրդատուի (գիտական ղեկավարի)

հետ համատեղ՝ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջոցսցիպլինար կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական ծրագր(եր)ի դասընթացների ցանկից՝ 1-3-րդ կիսամյակների ընթացքում: Տվյալ ծրագրի կամընտրական դասընթացներից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատաձևավալը պետք է կազմի առնվազն 9 կրեդիտ, իսկ առաջարկվող դասընթացների քանակը՝ պահանջվածից առնվազն 2 անգամ ավելի:

Կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից մագիստրանտը հնարավորություն ունի ընտրելու երեքը:

Մագիստրոսական ծրագիր՝  
**“Բնասպահայանություն և բնօգտագործում”**

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
04/M12	Էկոլոգիական ռիսկի գնահատում	3	32/24/8	III	Քննություն
04/M17	Ռեկրեացիոն բնօգտագործում	3	32/24/8	I	Քննություն
04/M19	Շրջակա միջավայրը և մարդու առողջությունը	3	32/24/8	II	Քննություն
04/M21	Հետազոտության տրամաբանություն	3	32/24/8	II	Քննություն
04/M22	Բժշկական էկոլոգիա	3	32/24/8	III	Քննություն
04/M58	Արդյունաբերական էկոլոգիա	3	32/24/8	I	Քննություն

**2.2. Հետազոտական կառուցամաս**

Ծրագրի հետազոտական կառուցամասը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ *գիտական սեմինար, գիտահետազոտական աշխատանք, գիտահետազոտական սյրակտիկա, գիտամանկավարժական սյրակտիկա և մագիստրոսական թեզ:*

*Գիտական սեմինարը* ծրագիրն իրականացնող կառույցի (գիտական կազմակերպություն, ամբիոն, կենտրոն և այլն) կողմից կազմակերպվող կանոնավոր գործող սեմինարների շարք է, որի կայացման ժամանակացույցը սահմանվում է մագիստրոսական ծրագրի տվյալ կիսամյակի դասացուցակով: Գիտական սեմինարի ընթացքում մագիստրանտներին ցուցա-

բերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական և մեթոդական աջակցություն, ձևավորվում են գիտական սեմինարներին հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու հմտություններ:

**Գիտահետազոտական աշխատանքի** բովանդակությունը պայմանավորվում է ուսանողի մագիստրոսական թեզի թեմայի խնդիրներով և կազմվում է գիտական ղեկավարի հետ համատեղ: Այն կազմակերպվում է ուսումնառության 2-րդ, 3-րդ և 4-րդ կիսամյակներում՝ ընդհանուր 18 կրեդիտ աշխատաժամվալով:

**Գիտահետազոտական պրակտիկան** կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ամբիոնի կամ լաբորատորիայի գիտական թեմաների շրջանակներում: Ունի 3 կրեդիտ աշխատաժամվալ:

**Գիտամանկավարժական պրակտիկան** կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Այն ևս ունի 3 կրեդիտ աշխատաժամվալ:

**Մագիստրոսական թեզի** կատարումը և նրա պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որն իրականացվում է 4-րդ կիսամյակում: Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 15 կրեդիտ աշխատաժամվալ:

## Մաս II.

### ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

## 1. ՏԵՂԵԿԱԳՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ

*Պասընթացների տեղեկագիրքը* նախատեսված է «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության ամբիոնում իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրի նույնանուն մասնագիտության վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես ուսումնական ծրագրի, այնպես էլ դրա բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է՝

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջներն ու ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

## Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ

**05/M06. Համակարգչային տեխնոլոգիաները բնապահպանական հետազոտություններում** (3 կրեդիտ)

*Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

### **Նպատակը.**

1. ուսումնառության ընթացքում մագիստրանտների մեջ զարգացնել ինֆորմացիոն տեխնոլոգիաների, ինչպես նաև համակարգչային բնապահպանության ոլորտին առնչվող ընդհանուր գործնական գիտելիքներ:
2. ծանոթացնել ինֆորմատիկայի բնագավառում տարբեր մասնագիտական ծրագրերի ուսումնասիրություններով:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

##### **1. կիմանա՝**

Ինչպիսի մասնագիտական ծրագրային փաթեթներ կան, և դրանց կիրառելիությունը գիտության զանազան բնագավառներում:

##### **2. Կարողանա**

2.1 Տիրապետել Windows օպերացիոն համակարգին:

2.2 Պատրաստել/մշակել տարբեր բարդության տեքստեր:

2.3 Կառուցել բարդ մոլեկուլային համակարգեր:

2.4 Կատարել համակարգչային փորձեր:

2.5 Հեշտությամբ օգտվել համացանցից:

##### **3. Կտիրապետի**

3.1 Օպերացիոն համակարգում աշխատանքների կազմակերպման մեխանիզմներին:

3.2. Windows օպերացիոն միջավայրում տեքստային ծրագրային փաթեթների հնարավորություններին:

3.2 Hyperchem ծրագրային փաթեթի առանձնահատկություններին:

#### **Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Հաշվողական մեքենաների պատմությունը, տարբեր սերնդի մեքենաներ: Համակարգչի կառուցվածքը, էլքի-մուտքի սարքեր: Օպերացիոն համակարգեր, հիմնական տարրերը: Windows օպերացիոն միջավայրում աշխատանք պատուհանների և ֆայլերի հետ: Հարակից/պերիֆերիկ սարքեր: **Թեմա 2՝** Կիրառական ծրագրեր: Վիրուսներ և հակավիրուսային ծրագրեր: Ցանցեր և Համացանց: Հաշվողական ցանցերի դասակարգում: Լոկալ ցանցերի տոպոլոգիա: Ինտերնետ ցանցի ծառայություններից օգտվելու մեթոդներ: Մասնագիտությանը առնչվող օգտակար կայքեր: **Թեմա 3՝** MS Office ծրագրային փաթեթի տարաբնույթ մոդուլները: MS Office Word տեքստային խմբագրիչ - տեքստի մուտքագրում, խմբագրում և ձևավորում: Աղյուսակների հետ աշխատանք՝ MS Office Excel մոդուլի օգնությամբ: MS Office Powerpoint մոդուլի առանձնահատկությունները: **Թեմա 4՝** Մասնագիտական ծրագրային փաթեթներ: Տվյալների բազա:

Hyperchem ծրագրային փաթեթ: Ունիվերսալ տվյալների հենքեր, Protein Data Bank: **Թեմա 5** Համակարգչային փորձ՝ Hyperchem ծրագրային փաթեթի օգնությամբ:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է մագիստրանտի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

Քննության տեսակը	Միավոր
1. Առաջին միջանկյալ	0-4
2. Երկրորդ միջանկյալ	0-4
3. Եզրափակիչ քննություն	0-10

Հաճախում	Միավոր
Դասահաճախում և ակտիվություն	0-2

**16/M01 Մասնագիտության փիլիսոփայական հարցեր (3 կրեդիտ)**

*Շարթթական 2 ծավ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը**

Դասընթացի նպատակն է փիլիսոփայությունը դարձնել մասնագիտական մտածողության մշակույթի անհրաժեշտ տարրերից մեկը: Այն կոչված է ընդլայնելու մագիստրանտների հոգևոր մտահորիզոնը, հաղթահարելու մասնագիտական սահմանափակության շրջանակները:

**Կրթական արդյունքները**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը՝

**1. կծանոթանա** դասական և հետդասական փիլիսոփայական հայեցակարգերի հետ,

**2. ձեռք կրերի** մասնագիտական և փիլիսոփայական հիմնահարցերը քննադատաբար վերլուծելու և գնահատելու հմտություններ և ունակություններ,

**3. կծանոթանա** միջառարկայական հետազոտությունների մեթոդաբանական և աշխարհայացքային հիմքերի հետ:

**Բովանդակությունը**

**Թեմա 1**՝ Անտիկ փիլիսոփայության ընդհանուր ակնարկ: **Թեմա 2**՝ Ֆրենսիս Բեկոնը՝ որպես բրիտանական էմպիրիզմի հիմնադիր: **Թեմա 3**՝ Բրիտանական էմպիրիզմի ակունքները, Ջ. Լոկ, Ջ. Բերկլի, Դ. Հյում: **Թեմա 4**՝ Ռ. Դեկարտը որպես եվրոպական ռացիոնալիզմի հիմնադիր: **Թեմա 5**՝ Ի. Կանտը որպես գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր: **Թեմա 6**՝ Նեոկանտականություն: **Թեմա 7**՝ Առաջին պոզիտիվիզմ (Կոնտ, Սպենսեր, Միլ): **Թեմա 8**՝ Երկրորդ պոզիտիվիզմ (Մախ, Դյուգեն, Պուանկարե), **Թեմա 9**՝ Ամերիկյան պրագմատիզմ: **Թեմա 10**՝ Գիտության փիլիսոփայությունը Լ. Վիտգենշտեյնի հայեցակարգի մեջ, **Թեմա 11**՝ XX դ. Տրամաբանական պոզիտիվիզմը: **Թեմա 12**՝ Պոստպոզիտիվիզմ: **Թեմա 13**՝ Տեսության

մեթոդաբանական կարգավորիչները: **Թեմա 14**՝ Հերմենևտիկան որպես մարդկային կեցության մասին փիլիսոփայական ուսմունք: **Թեմա 15**՝ Էկզիստենցիալիզմի փիլիսոփայությունը: **Թեմա 16**՝ Լեզվի փիլիսոփայությունը: **Թեմա 17**՝ Պատմության ժամանակակից փիլիսոփայությունը: **Թեմա 18**՝ Գլոբալիզմի փիլիսոփայությունը:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

Քննության տեսակը	Միավոր
1. Առաջին միջանկյալ	0-4
2. Երկրորդ միջանկյալ	0-4
3. Եզրափակիչ քննություն	0-10

Հաճախում	Միավոր
Դասահաճախում և ակտիվություն	0-2

**Լրացական դասընթացներ**

**18/M01. Մասնագիտական օտար լեզու(անգլերեն ) (0 կրեդիտ)**

*Շարաթական 2 ժամ, 1-ին և 2-րդ կիսամյակ, ստուգարք:*

**Նպատակը**

Երկու կիսամյակ տևողությամբ ուսումնական գործունեության ընթացքում “Բնապահպանություն և բնօգտագործում” բաժնի մագիստրանտներին ուսուցանել մասնագիտական անգլերեն լեզու՝ բնապահպանության և բնօգտագործման կոնտեքստում, որն իր մեջ ներառում է համապատասխան մասնագիտական տերմինների ու արտահայտությունների, քերականական ժամանակաձևերի ու կառուցվածքների ուսումնասիրում և տիրապետում,մեթոդական կողմնորոշիչ ցուցումներ՝ ձեռք բերած գիտելիքները ամրապնդելու և վերարտադրելու նպատակով, տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների կիրառում՝ օգնելու սովորողներին զարգացնելու խոսքային հմտություններն ու կարողությունները, լրացուցիչ մասնագիտական և ոչ մասնագիտական տեքստերի վրա ինքնուրույն աշխատանք՝ օգտագործելով համապատասխան բառարաններ և ձեռնարկներ /տեքստերի թարգմանություն՝ անգլերեն-

հայերեն, հայերեն-անգլերեն, տեքստերի վերարտադրում, բառարանային աշխատանք և այլն/։ Օրագրի շրջանակներում նախատեսված է սովորողներին ծանոթացնել լեզուն ուսումնասիրելու հետ կապված խնդիրներին, նպատակներին, սկզբունքներին, ինչպես նաև օգնել հաղթահարելու սովորելու ընթացքում հանդիպող դժվարություններն ու խոչընդոտները։

**Կրթական արդյունքները.**

1. **Կիմանա** Օտար լեզվի առանցքային քերականական կառույցները, մասնագիտական ոլորտին վերաբերող կարևորագույն և հիմնական հասկացությունները, մասնագիտական տերմինաբանությունը։
2. **Կկարողանա** Մասնագիտական գրականություն հավաքագրել, մշակել և ներկայացնել։ Պատրաստել պրեզենտացիաներ, բանավեճեր վարել մասնագիտական թեմաների շուրջ։
3. **Կտիրապետի** Մասնագիտական տերմինաբանությանը, օտար լեզվով հաղորդակցման հմտություններին, օգտվի տարատեսակ աղբյուրներից և վերլուծություններից, օգտագործի դրանք կոնկրետ աշխատանքներ ծրագրավորելիս։

**Բովանդակությունը**

N	Բաժինը, թեման	Պարապունքների տիպը, ժամերի թիվը			Վերջնարդյունք
		Դասախոսություն	Սեմինար, գործնական	Ինքնուրույն	
Թեմա 1	ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ				
	Introduction of the syllabus: Tasks and objectives of the course. Starting Test Introducing yourself		2		Getting to know each other
Թեմա 2					
	What is Environmental Science(pp.6-14) <ul style="list-style-type: none"> <li>• definition of environmental science</li> <li>• aspects of environmental science</li> </ul>		2		1.Vocab. focus- words from general English with a special meaning in environmental science 2.Skills focus – Listening/speaking
Թեմա 3					
	What do Environmental Scientists do?(pp.14-22) <ul style="list-style-type: none"> <li>• the role of environmental science</li> </ul>		2		1.Vocab focus- headwords, definitions,. 2.Skills focus- reading/writing

	<ul style="list-style-type: none"> <li>careers in environmental science</li> </ul>				
Թեմա 4	<p>Grammar: Future Simple and going to(pp.32-33)</p> <p>Lesson 3:Earth's Surface Temperature(pp.25-35)</p> <p>Grammar, vocabulary ,matching, fill in exercises,translation.</p>		2		<p>1.Vocab. focus-words related to environmental science</p> <p>2.Skills focus-reading/writing</p>
Թեմա 5	<p>Lesson 4:Natural Disasters(pp. 36-43)</p> <p>Matching , gap fill,translation exercises.</p>		2		<p>1.Vocab. focus-words related to natural disasters</p> <p>2. Skills focus-reading/writing</p>
Թեմա 6	<p>Grammar: Noun, Possessive case of Nouns(pp54-57)</p> <p>Lesson 5: Plants and their Environment(pp. 48-57)</p> <p>Grammar, vocabulary exercises,translation, crossword puzzle.</p>		2		<p>1.Vocab. focus-words related to plants</p> <p>2.Skills focus-reading/writing</p>
Թեմա 7	<p>Grammar: Adjectives and Adverbs(pp64-66)</p> <p>Lesson 6:The Animal Word(pp.58-63)</p> <p>Grammar, vocabulary, matching, gap fill tasks, translation.</p>		2		<p>1.Vocab. focus-words related to environmental science</p> <p>2.Skills focus-reading/writing</p>
Թեմա 8	<p>Grammar: Comperatives and Superlatives: Adjectives(pp.74-76)</p> <p>Lesson 7: Population and population change(pp.67-73)</p> <p>Gap fill, matching exercises, translation.</p>		2		<p>1.Vocab. focus-words related to environmental science</p> <p>2.Skills focus-reading/writing</p>
Թեմա 9	<p>Grammar: Past Simple(pp.83-85)</p>		2		<p>1.Vocab. focus-words related</p>

	<p>List of irregular verbs by heart.</p> <p>Write a letter putting correct irregular verbs.</p> <p>Armenian Forest Zone(pp.93-100)</p> <p>Listening: "Redwood Ecology", comment on the following points:</p> <p>1.Which animals are becoming extinct?</p> <p>2.Do they have any connection with the forest condition? Comment on the stated ideas.</p>				<p>to environmental science</p> <p>2.Skills focus-listening/speaking</p>
Թեմա 10	Mid term exam		2		
Թեմա 11	<p>Grammar: Stative Verbs(pp.94-96)</p> <p>Lesson 9: Food Chains(pp.86-94)</p>				<p>1.Vocab. focus-words related to environmental science</p> <p>2.Skills focus-reading/writing</p>
Թեմա 12	<p>Grammar: Past Continuous(pp.104-106)</p> <p>Lesson 10: Pollution(pp.97-104)</p> <p>Fill in,matching, gap fill exercises.</p>		2		<p>1.Vocab. focus-words related to environmental science</p> <p>2.Skills focus-reading/writing</p>
Թեմա 13	<p>Grammar :The Passive(pp.114-116)</p> <p>Lesson 11:Pollution and your Health(pp.107-114)</p> <p>Listening : "Air Quality", comment on the following</p> <p>1.Why do we so often talk about air quality?</p> <p>2.The polluted air affects on public health. What does the narrator mean?</p>		2		<p>1.Vocab. focus-words related to environmental science</p> <p>2.Skills focus-listening/speaking</p>

Թեմա 14	Grammar: Present Perfect Simple(pp.127-129) Lesson 12: Controlling Pollution(pp.117-127)  Grammar, vocabulary ,matching, fill in exercises,translation.		2		1.Vocab. focus-words related to environmental science 2.Skills focus-reading/writing
Թեմա 15	Grammar: Reported Speech:Modal Verbs, Adverbs of time and place(pp.159-161) Lesson 15: Solid Waste(pp.152-158) Grammar, vocabulary ,matching, fill in exercises,translation.		2		1.Vocab. focus-words related to environmental science 2.Skills focus-reading/writing
Թեմա 16	Final Oral Test(presentation)		2		
	2nd Term				
Թեմա 1	The Atmosphere(pp. 22-30) <ul style="list-style-type: none"> <li>• gaseous composition of the atmosphere</li> <li>• effects of human activity on the atmosphere</li> <li>• depletion of the ozone layer</li> </ul>		2		1.Vocab. focus-stress patterns in multi-syllable words, prefixes 2.Skills focus-listening/speaking
Թեմա 2	Computers in Environmental Science(pp.30-38) <ul style="list-style-type: none"> <li>• digital mapping</li> <li>• computers for research</li> </ul>		2		1.Vocab focus-computer jargon, abbreviations and acronyms 2.Skills focus-reading/writing
Թեմա 3	Energy Resources(pp.38-46) <ul style="list-style-type: none"> <li>• non-renewable energy sources and their environmental impact</li> </ul>		2		1.Vocab focus-sets:synonyms, antonyms, the language of trends 2.Skills focus-

	<ul style="list-style-type: none"> <li>renewable energy sources, e. g., solar, hydro, wind power</li> </ul>				listening/speaking
Թեմա 4	Soil as a Resource(pp.46-54) <ul style="list-style-type: none"> <li>composition of soil</li> <li>impact of intensive farming on soil</li> </ul>		2		1.Vocab focus-synonyms, replacement subjects 2.Skills focus-reading/writing
Թեմա 5	Recycling Waste(pp.54-62) <ul style="list-style-type: none"> <li>recycling methods and processes</li> <li>advantages and disadvantages of recycling</li> </ul>		2		1.Vocab. focus-compound nouns, fixed phrases from environmental science 2.Skills focus-listening/speaking
Թեմա 6	Ecosystems(pp.62-70) <ul style="list-style-type: none"> <li>the Earth's biosphere</li> <li>definition of ecosystem</li> </ul>		2		1.Vocab focus-synonyms, nouns from verbs 2.Skills focus-reading/writing
Թեմա 7	Preserving Biodiversity(pp.70-78) <ul style="list-style-type: none"> <li>impact of human activity on flora and fauna</li> <li>case study:lowland and mountain gorilla</li> </ul>		2		1.Vocab focus-fixed phrases from environmental science 2.Skills focus-listening/speaking
Թեմա 8	Pollution(pp.78-86) <ul style="list-style-type: none"> <li>environmental effects of modern transportation systems and power stations</li> <li>technological and legislative measures to reduce pollution</li> </ul>		2		1.Vocab. focus-neutral and marked words 2. Skills focus-reading/writing
Թեմա 9	Agriculture(pp.86-94) <ul style="list-style-type: none"> <li>environmental impacts of modern farming methods</li> <li>GM foods</li> </ul>		2		1.Vocab. focus-words/phrases related to farming and environmental

	<ul style="list-style-type: none"> <li>Organic farming</li> </ul>				<p>issues</p> <p>2.Skills focus-listening/speaking</p>
Թեմա 10	Mid Term Exam		2		
Թեմա 11	<p>Sustainability(pp.94-101])</p> <ul style="list-style-type: none"> <li>The concept of sustainability</li> <li>Survey gathering quantitative data on attitudes to sustainable transport</li> </ul>		2		<p>1.Vocab. focus-words for quantities,linking words</p> <p>2.Skills focus-reading/writing</p>
Թեմա 12	<p>Grammar: Time Clauses(pp.169-171)</p> <p>Lesson 16: Pesticides(pp.162-169)</p> <p>Vocabulary,matching, fill in the gap exercises.</p> <p>Translation, crossword puzzle.</p>		2		<p>1.Vocab. focus-words related to environmental science</p> <p>2.Skills focus-reading/writing</p>
Թեմա 13	<p>Grammar: Gerund and Infinitives(pp.181-183)</p> <p>Lesson 17: Life in the Universe(pp.173-181)</p> <p>Grammar, vocabulary ,matching, fill in exercises,translation.</p>		2		<p>1.Vocab. focus-words related to the Universe</p> <p>2.Skills focus-reading /writing</p>
Թեմա 14	<p>Lesson 18: Radiation(pp.184-192)</p> <p>Vocabulary,matching, fill in the gap exercises.</p> <p>Translation.</p>		2		<p>1.Vocab. focus-words related to radiation</p> <p>2.Skills focus-reading/writing</p>
Թեմա 15	<p>Mineral Resources(pp.85-92) Code on Mineral Resources of RA by heart.Listening: "Rocks and Minerals", comment on the following points:</p> <ol style="list-style-type: none"> <li>What are all rocks made up of?</li> <li>Where have all</li> </ol>		2		<p>1.Vocab. focus-words related to minerals</p> <p>2.Skills focus/listening/speaking</p>

	these observations been done?  3. What could be observed by microscope?  4. What is mineral?				
Թեմա 16	Final Oral Test(presentation)		2		
Ընդամենը՝ 64 ժամ, որից գործնական՝ 56 ժամ, ստուգում՝ 4 ժամ և ստուգարք՝ 4 ժամ					

### Առարկայի ուսուցման ավարտին գնահատման չափորոշիչները

Գնահատումը կատարվում է սովյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ մեկ ստուգում , ստուգարք, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ

Քննության տեսակը	Միավոր
4. Միջանկյալ ստուգում	0-6
5. Ստուգարք	0-7

Հաճախում	Միավոր
Դասահաճախում և ակտիվություն, որից	0-7
Դասահաճախում՝	0-3.5
Ակտիվություն՝	0-3.5

## Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ

### 04/M01. Մանկավարժի անվտանգություն և պաշտպանություն (4 կրեդիտ)

*Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

#### Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել սննդամթերքի անվտանգության պաշտպանության հիմունքներին, սննդամթերքի անվտանգության ապահովման ժամանակակից չափորոշիչներին և սկզբունքներին:

#### Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը՝

**1. կիմանա** սննդի շղթայի տարբեր փուլերում սննդամթերքի աղտոտման, ինչպես նաև սննդամթերքի սպառման հետ կապված պոտենցիալ վտանգները և ռիսկերը

**2. կկարողանա** կիրառել սննդամթերքի անվտանգության չափորոշիչները, հնարավորինս տարբերակել կեղծված և առողջության համար պոտենցիալ վտանգ ներկայացնող սննդամթերքը:

**3. կտիրապետի** սննդամթերքի անվտանգության սուր և քրոնիկ ռիսկի գնահատման որակական և քանական մեթոդներին:

#### Բովանդակությունը.

N	Բաժինը, թեման	Պարապունքների տիպը, ժամերի թիվը			Վերջնարդյունք
		Դասա-խոսություն	Սեմինար, գործնական	Ինքնուրույն	
Թեմա 1	ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ	2			Սննդամթերքի անտանգության առարկան, կապը այլ գիտությունների հետ:
Թեմա 2	Սննդամթերքի անվտանգության հիմունքներ	4		4	Անվտանգ սնունդ ու սննդի անվտանգություն սահմաններ, տարբերություններ:
Թեմա 3	Սննդամթերքի անվտանգության ռիսկի վերլուծության ՀՀ և միջազգային մոտեցումներ: Համեմատական վերլուծություն:	2	2	6	Ռիսկի վերլուծության 3 բաղադրիչները:

Թեմա 4	Մանդամթերքի աղտոտման ընդհանուր հիմունքներ:	4	2	8	Մննդի աղտոտումը սննդի մատակարարման շղթայում:
Թեմա 5	Մանդամթերքի աղտոտման ձևերը և վտանգների տեսակները (տարբեր սննդամթերքների օրինակներով):	2	2	8	Կենսաբանական և քիմիական աղտոտիչները:
Թեմա 6	Մանդամթերքի հիգիենան: Քիմիական և կենսաբանական աղտոտման կանխարգելման նախադրյալ ծրագրեր:	4	2	10	Պատշաճ հիգիենա և արտադրավական գործելակերպ ստանդարտ:
Թեմա 7	Մանդամթերքի անվտանգության կառավարման համակարգեր:	4	2	10	ՎՎՀԿԿ համակարգ
Թեմա 8	Մուր և քրոնիկ ռիսկերի գնահատման մեթոդները:	2	4	10	Տարբեր բանաձևերի միջոցով ինքնուրույն հաշվարկ
Թեմա 9	Ռիսկի որակական և քանակական գնահատման մեթոդները:	4	4	8	Տարբեր բանաձևերի միջոցով ինքնուրույն հաշվարկ
Թեմա 10	Մանդամթերքի ռիսկի վրա հիմնված ստուգումներ: Ռիսկի կառավարում:	4	2	4	Ռիսկի կառավարման պրակտիկ դեպքերի քննարկում:
Ընդամենը՝ 120 ժամ		32	20	68	

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

Քննության տեսակը	Միավոր
1. Առաջին միջանկյալ	0-4
2. Երկրորդ միջանկյալ	0-4
3. Եզրափակիչ քննություն	0-10
Հաճախում	Միավոր
Դասահաճախում և ակտիվություն	0-2

**04/M02. Կենսագործունեության անվտանգություն (4 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է մագիստրանտներին տալ գիտելիքներ բոլոր տեսակի վտանգների (բնական, տեխնածին, կենսաբանական, քիմիական և այլն) և համապատասխան պրոֆիլակտիկ և պաշտպանական միջոցառումների կիրառման և վտանգի պայմաններում վարքի ձևավորման մասին: Յուրացնելով դասընթացի հիմունքները՝ մարդն ապահով կարող է պաշտպանվել վտանգներից, գրագետ գործել վտանգի պայմաններում և իր գիտելիքներով օգնել ուրիշներին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** «Կենսագործունեության անվտանգություն» դասընթացի հիմնական հասկացությունների, տարբեր վտանգների բովանդակության, ինչպես նաև բնակչությանը տարբեր վտանգներից պաշտպանվելու միջոցների և գործնական հանձնարարականների վերաբերյալ գիտելիքներ:

**2. կկարողանա** տարբեր վտանգների պրոբլեմային իրավիճակներում ճիշտ որոշումներ ընդունել:

**3. կտիրապետի** տարբեր վտանգների դեպքում պաշտպանության միջոցների և համապատասխան հանձնարարականների պրակտիկ կիրառման հմտություններին:

**Բովանդակությունը.**

N	Բաժինը, թեման	Պարապունքների տիպը, ժամերի թիվը			Վերջնարդյունք
		Դասախոսություն	Սեմինար, գործնական	Ինքնուրույն	
Թեմա 1	Կենսագործունեության անվտանգության դասընթացի ուսումնասիրության առարկան, նպատակը և խնդիրները, հիմնական տերմիններն ու հասկացությունները: Վտանգների դասակարգումը և բնութագիրը	2		10	ընդհանուր պատկերացում դասընթացի մասին
Թեմա 2	Մարդը որպես Մարդ-միջավայր համակարգի տարր, մարդ-միջավայր համակարգի համատեղելիություն, մարդ-բնական միջավայրի բացասական գործոնները և այդ գործոնների ազդեցությունը	2		10	Մարդու և շրջակա միջավայրի միջև կապը, մարդու ազդեցությունը ՇՄ վրա
Թեմա 3	Բնական վտանգներ, դրանց դասակարգումը: Լիթոսֆերային վտանգներ(երկրաձաթժ, ձնախյուս, հրաբխային ժայթքումներ): Հիդրոսֆերային վտանգներ(ջրհեղեղ, ցունամի), մթնոլորտային վտանգներ (մրրիկահողմ, մրրիկ, պտտահողմ)	2		10	վտանգների առաջացման սկզբունքները, դասակարգումը

Թեմա 4	Վտանգավոր ազդեցությունների ռիսկի գնահատումն ու վերլուծությունը, էկոլոգիական ռիսկի վերլուծություն և կառավարում(ռիսկի վերլուծություն և վտանգի գնահատում, ռիսկի բնութագրի հաշվարկման մեթոդներ, )	6	2	14	Գիտելիքներ էկոլոգիական ռիսկի վերաբերյալ, ռիսկի նվազեցման ուղիների, ռիսկի կառավարման մեթոդների մասին
Թեմա 5	Տեխնաձին վտանգներ և կենսագործունեության անվտանգություն: Մեխանիկական վտանգներ, տատանումներ, նրանց կենսաբանական ազդեցությունը, պաշտպանության մեթոդներն ու միջոցները: Էլեկտրամագնիսական դաշտեր և ճառագայթում	4	2	12	վտանգի առաջացման սկզբունքները, դասակարգումը: Ստեղծված իրավիճակում համապատասխան անվտանգության գործողությունների մասին տեղեկություն
Թեմա 6	Կենսաբանական վտանգներ և կենսագործունեության անվտանգություն: Կենսաբանական վտանգների բնույթը և դասակարգումը, միկրոօրգանիզմներ, սնկեր, բույսեր, կենդանիներ, սողուններ և այլն:	2	2	10	գոյություն ունեցող կենսաբանական վտանգներ մասին գիտելիքներ
Թեմա 7	Քիմիական և կենսագործունեության անվտանգություն:	2		10	Քիմիական անվտանգության

	Քիմիական վտանգավոր նյութերի դասակարգումը – քսենոֆոտիկներ, վնասակար նյութեր, ծանր մետաղներ, թունաքիմիկատներ և այլն:				տեսակների դասակարգման և պաշտպանության մասին գիտելիքներ
Թեմա 8	Շրջակա միջավայրը և աղտոտման նվազեցման ուղիները, հիմնական մեթոդները: Անթափոն և սակավաթափոն արտադրություն, կարծր թափոններ, նրանց վերամշակումը, վնասագերծումը:	4	2	12	ՇՄ աղտոտման էկոլոգիական ռիսկի նվազեցման մեթոդների և հիմնական ուղիների մասին գիտելիքներ
<b>Ընդամենը՝ 32 ժամ, որից 24 ժամ դասախոսություն 8 ժամ գործնական</b>		24	8	88	

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

Քննության տեսակը	Միավոր
1. Առաջին միջանկյալ	0-4
2. Երկրորդ միջանկյալ	0-4
3. Եզրափակիչ քննություն	0-10
Հաճախում	Միավոր
Դասահաճախում և ակտիվություն	0-2

**04/M03. Մարդկային կայուն զարգացման հիմունքներ (4 կրեդիտ)**

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսումնասիրել կայուն զարգացման հայեցակարգի պատմությունը, ցույց տալ ճգնաժամային իրավիճակների և էկոլոգիական հիմնախնդիրների համակարգային բնույթը: Բնագիտական (բնապահպանական, արդյունավետ բնօգտագործման, էկոլոգիական անվտանգության, էկոլոգիական իրավունք և այլն) բաժնի դասընթացներից նախկինում ստացած գիտելիքների և հասկացությունների հիման վրա մագիստրանտներին սովորեցնել քննադատորեն վերլուծել էկոլոգիական, տնտեսական, սոցիալական ներկա հիմնախնդիրների առաջացումը, գտնել պատճառա-հետևանքային կապերը և լուծման ուղիները, որոնք կտանեն դեպի «Կանաչ էկոնոմիկա»:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը՝

**1. կիմանա** դասընթացի ծագման նախադրյալները, պատմությունը, արդի վիճակը, ինչպես նաև զարգացման հեռանկարները: Ձեռք կբերի գիտելիքներ կայուն զարգացման հիմնախնդիրների, դրանց առանձնահատկությունների վերաբերյալ, ինչպես նաև կծանոթանա հիմնական հասկացությունների հետ,

**2. կկարողանա** առանձնացնել էկոլոգիական ճգնաժամերը, առանձնացնել և հիմնավորել ՄԱԿ-ի Հազարամյակի գազաթափոփում ձևավորված այն նպատակները, որոնք առավել են կարևորվում ՀՀ-ում, բնութագրել ԿԶ/ԿՄԶ/ ասպեկտները և դրանց փոխադարձ կապը ընդհանրացված գծապատկերով,

**3. կտիրապետի** հասարակության և կենսոլորտի հիմնական բնութագրերի կանխատեսմանը՝ Երկրագնդի բնակչության անվերահսկելի աճի պարագայում /համաձայն Դ.Մեդոուզի գրաֆիկի/, ինչպես նաև մարդկային զարգացման համաթվի /ՄԶՀ/ հաշվարկման մեթոդին:

**Բովանդակությունը.**

N	Բաժինը, թեման	Պարապունքների տիպը, ժամերի թիվը			Վերջնարդյունք
		Դասախոսություն	Սեմինար, գործնական	Ինքնուրույն	
Թեմա 1	Ներածություն Մարդկային զարգացման հայեցակարգային մոտեցումները: Մարդկային զարգացման հիմնախնդիրների արծարծումը ՄԱԿ-ի	2		4	Կայուն զարգացման հիմնական հասկացությունները, բնութագրիչ կողմերը, Մարդկության գլխավոր նպատակի սահմանումը

	<p>գագաթաժողովներում: Մարդկային զարգացման տնտեսական, սոցիալական բաղադրիչները: Տնտեսական աճ, աշխատանք, զբաղվածություն և մարդկային զարգացում: Բնակչության կենսամակարդակը և սոցիալական շերտավորումը: “Կրթություն հանուն կայուն զարգացման” գործընթացը և Հայաստանի մասնակցությունը: “Օրակարգ 2030 փաստաթղթում ներառված կայուն զարգացման նպատակները:</p>				
	<p>Մարդկային զարգացման տեսությունը/Էվոլյուցիան, հիմնական բնութագրերը, գնահատումը/: Մարդկային զարգացման գնահատման հավելյալ հայտանիշները և ցուցանիշները:</p>	4	1	8	Մարդկային զարգացման համաթիվը, բանաձևը և ցուցանիշները
Թեմա 2	<p>Մարդկային Ջարգացումը և ժամանակակից համամոլորակային հիմնախնդիրները 2.1 Էկոլոգիական բնույթի ժամանակակից</p>	4		4	Թվարկել ժամանակակից գլոբալ խնդիրները, զարգացած և զարգացող երկրների տարբերություն

	գլոբալ խնդիրները, 2.2 Սոցիալ տնտեսական բնույթի ժամանակակից գլոբալ խնդիրները:				ներ
Թեմա 3	Մարդկային զարգացման բնօգտագործման և բնապահպանական բաղադրիչը. 3.1 “Կլիմայի համամոլորակային փոփոխության մասին” կոնվենցիան; Կլիմայի գլոբալ փոփոխության 2 սցենարները; 3.2 “Պայքար անապատացման դեմ” կոնվենցիան; Անապատացմա սոցիալ տնտեսական հետևանքները; 3.3 “Կենսաբազմազան ության մասին” կոնվենցիան: Կենսաբազմազանու թյան միջավայրաստեղծ նշանակությունը	4	2	14	Գիտելիքներ կլիմայի փոփոխության կանխատեսելի ության, անապատացմա ն պատճառների և հետևանքների վերաբերյալ, կենսաբազմազան ությունը որպես շրջակա միջավայրի պարտադիր հատկանիշ
Թեմա 4	Կայուն զարգացման հայեցակարգը. 4.1 հիմնական սկզբունքները և համառոտ բնութագիրը; 4.2 Գլոբալացումը և կայուն զարգացումը:	2	1	6	Կայուն զարգացման գծապատկերը
Թեմա 5	Մարդկային զարգացման տնտեսական և սոցիալական բաղադրիչները.	2	1	6	Կապիտալի 3 ձևերի սահմանումներ ը և տարբերություն

	5.1. Բնական կապիտալ, ֆիզիկական կապիտալ և մարդկային կապիտալ; 5.2 Տնտեսական աճը, զբաղվածությունը և մարդկային զարգացումը; 5.3 Բնակչության կենսամակարդակը հիմնական ցուցանիշները:				ը: Բնակչության կենսամակարդակի ընդհանուր պատկերը
Թեմա 6	Բնակչության աղքատությունը, դրսևորման ձևերը և հաղթահարման հիմնախնդիրները	2	1	2	ՀՀ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը
Թեմա 7	Բնակչության սոցիալական ապահովությունը և առողջապահությունը	2	1	4	Բնակչության սոցիալական ապահովության 4 ասպեկտները
Թեմա 8	Մարդկային զարգացման գիտակրթական և մշակութային բաղադրիչները. 8.1 Կրթության զարգացման հեռանկարները “Կրթություն հանուն կայուն զարգացման” ռազմավարությունը և ժամանակակից զարգացումները; 8.2 Գիտությունը, տեխնիկական և մարդկային զարգացումը; 8.3 Մշակույթը որպես մարդկային զարգացման գործոն	2	1	10	Օրակարգ 2030 փաստաթուղթը և ԿԶ նպատակները, գիտության, տեխնիկայի, մշակույթի դերն ու նշանակությունը: “ԿԿԶ” ռազմավարությունը
Ընդամենը	90 ժամ, 3 կրեդիտ	24	8	58	

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

<b>Քննության տեսակը</b>	<b>Միավոր</b>
1. Առաջին միջանկյալ	0-4
2. Երկրորդ միջանկյալ	0-4
3. Եզրափակիչ քննություն	0-10
<b>Հաճախում</b>	<b>Միավոր</b>
Դասահաճախում և ակտիվություն	0-2

**04/M05. Համալիր գեոէկոլոգիական քարտեզագրում (4 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է մագիստրանտներին ծանոթացնել գեոէկոլոգիական քարտեզագրության և քարտեզների ստեղծման մեթոդների գիտական հիմնավորմանը, գեոէկոլոգիական քարտեզագրման փորձի ընդհանրացմանը:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

**1. կիմանա** էկոլոգիական քարտեզագրության մեթոդական, տեսական հիմնական սկզբունքները: Էկոլոգիական տեղեկատվության տեսակները, էկոլոգիական քարտեզագրության փուլերը, կանոնները, եղանակները, տարածական միավորները,

**2. կհասկանա** գեոէկոլոգիական համալիր քարտեզների ստացման և քարտեզագրական մեթոդների, քարտեզագրական ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման մեխանիզմները,

**3. կկարողանա** իր գիտելիքները օգտագործել մի շարք բնապահպանական, տարածքային պլանավորման հետազոտություններում, քարտեզագրական և տվյալների տարածական վերլուծության աշխատանքներում:

**Բովանդակությունը.**

N	Բաժինը, թեման	Պարապունքների տիպը, ժամերի թիվը			Վերջնարդյունք
		Դասախոսություն	Սեմինար, գործնական	Ինքնուրույն	
<b>Թեմա 1</b>	<b>ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ</b>	3		9	
	Ներկայացվում է քարտեզագրությունը որպես առանձին գիտական ուղղություն, քարտեզները և նրանց դասակարգումը ըստ հիմնական հայտանիշների: Քարտեզագրական մաթեմատիկական հիմքը կորդինատային համակարգ, պրոեկցիա, մասշտաբ:				Կիմանան քարտեզագրության մեթոդական, տեսական հիմնական սկզբունքները:
<b>Թեմա 2</b>	<b>ԳԵՈԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՏԵՄԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ</b>	3	2	9	
	Էկոլոգիական քարտեզագրության հետազոտության առարկան, նպատակը և խնդիրները, տեղը գիտությունների դասակարգման համակարգում: Էկոլոգիական քարտեզագրության ստեղծման և զարգացման պատմությունը: Էկոլոգիական				Կիմանան Էկոլոգիական քարտեզագրության մեթոդական, տեսական հիմնական սկզբունքները: Կկարողանան ստացված գիտելիքները օգտագործել քարտեզագրական և տվայլների տարածական վերլուծության

	քարտեզների տեղը թեմատիկ քարտեզների համակարգում:				աշխատանքները ւմ:
Թեմա 3	<b>ԳԵՈԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆ ԵՐԸ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԵՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ</b>	8	2	18	
	Էկոլոգիական քարտեզներ և դրանց դասակարգումը: Գեոէկոլոգիական քարտեզագրման հիմնական ուղղությունները: Էկոլոգիական տեղեկատվության ապահովումը, տեսակները և ճշտությունը: Քարտեզները որպես տեղեկատվության աղբյուր, նրանց կառուցվածքը և նշանակությունը, կոորդինատային համակարգերը, ինչպես նաև օդատիեզերական տեղեկատվության աղբյուրները և տեսակները:				Կիմանան Էկոլոգիական քարտեզներ դասակարգման սկզբունքները: Կլարոդանան առանձնացնել Էկոլոգիական տեղեկատվության և տեսակները և գնահատել ճշտությունը: Կտիրապետեն Էկոլոգիական քարտեզների կազմման հմտություններին :
Թեմա 4	<b>ԳԵՈԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒ ԹՅՈՒՆԸ, ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ</b>	10	4	22	

	<b>ՆՐ</b> Էկոլոգիական քարտեզների կազման մեթոդները: Էկոլոգիական քարտեզների օգտագործման կիրառական ասպեկտները: Գեոէկոլոգիական հետազոտությունների քարտեզագրման ասպեկտման հիմնական փուլերը, քարտեզագրման և էկոլոգիական հիմնական օրենքների և կանոնների, Էկոլոգիական քարտեզագրման տարածական միավորները, բնապահպանական խնդիրների լուծման USZ մեթոդները:				Կիմանան էկոլոգիական քարտեզների կազման մեթոդները: Առանձին էկոլոգիական բաղադրիչների քարտեզագրման առանձնահատկությունները: Կլարողանան կիրառելի մեթոդները USZ միջավայրում թվային քարտեզների ստացման ժամանակ:
<b>Ընդամենը՝ 90 ժամ,</b>	24	8	58		

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

Քննության տեսակը	Միավոր
1. Առաջին միջանկյալ	0-4
2. Երկրորդ միջանկյալ	0-4
3. Եզրափակիչ քննություն	0-10
Հաճախում	Միավոր
Դասահաճախում և ակտիվություն	0-2

**04/M06. Տարածական տեղեկատվական համակարգեր և կառավարում (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է մագիստրանտներին ծանոթացնել տարածական տեղեկատվական ենթակառուցվածքներին, որպես տարածական տեղեկատվության համակարգման և գիտականորեն հիմնավորված որոշումների կայացման և կառավարման հիմք և կարևորագույն գործիք:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

**1.կիմանա** տարածական տեղեկատվական տեխնոլոգիաների դերն ու նշանակությունը գիտականորեն հիմնավորված որոշումների կայացման գործում՝ տարածքների համաչափ զարգացման ռացիոնալ օգտագործման ուղղությամբ, համացանցի ընձեռած հնարավորությունները տեղեկատվության փոխանակման, միջազգային ստանդարտավորման ուղղությամբ,

**2.կտիրապետի** համացանցում տարածական տեղեկատվության վերլուծության, մշակման, արտապատկերման և փոխանակման երկրատեղեկատվական և հեռագնման ժամանակակից մեթոդներին,

**3.կկարողանա** վերլուծել և համակարգել շրջակա միջավայրի, բնատարածքային համալիրների առկա վիճակի, նշանակության և խոցելիությանը վերաբերվող տեղեկատվությունը՝ համաձայն տարածական պլանավորման ներկայացված պահանջների, նորմատիվների և միջազգային ստանդարտների:

**Բովանդակությունը.**

N	Բաժինը, թեման	Պարապունքների տիպը, ժամերի թիվը			Վերջնարդյունք
		Դասախոսություն	Սեմինար, գործնական	Ինքնուրույն	
Թեմա 1	ՆԵՐԱՕՈՒԹՅՈՒՆ	2	0	2	Ծանոթացում տեղեկատվական հասարակությանը պահանջներին և որոշումների կայացման գործում տեղեկատվական

					տեխնոլոգիաների դերին ու նշանակությանը
1.1	Որոշումների կայացում տարածական պլանավորման համակարգում	2	0	2	
Թեմա 2	Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր (ԱՏՀ)	2	0	2	Գիտելիքներ ԱՏՀ տեխնոլոգիաների բազային հասկացություններ ի, հիմնական բաղադրիչների վերաբերյալ
2.1	ԱՏՀ դերն ու նշանակությունը, պատմական ակնարկ. Հիմնական բաղադրիչները, բազային հասկացություններ ը, ապարատային և ծրագրային բաղադրիչները:	2	0	2	
Թեմա 3	ԱՏՀ տվյալների մոդելներ, տեղեկատվության ներկայացման ձևաչափերը	4	4	10	Գիտելիքներ ԱՏՀ միջավայրում տեղեկատվության ներկայացման ձևաչափերի և տեղեկատվական բազաների վերաբերյալ , ԱՏՀ միջավայրում աշխատանքի հմտություններ
3.1	Ռաստրային տվյալներ, վեկտորային տվյալներ	2	2	5	
3.2	Ատրիբուտային տվյալների բազա	2	2	5	
Թեմա 4	Ինտերպոլյացիա (միջարկում)	2	2	10	ԱՏՀ միջավայրում միջարկման մեթոդների

					տիրապետման գիտելիքներ և հմտություններ
4.1	Ինտերպոլյացիոն մեթոդներ	2	2	10	
Թեմա 5	Տարածական տեղեկատվական ենթակառուցվածք ներ (SSE)	2	0	6	Գիտելիքներ SSE- ների առանձնահատկույթ ունների վերաբերյալ
5.1	SSE դերն ու նշանակությունը	2	0	6	
Թեմա 6	SSE կառուցվածքային տարրերը.	4	2	8	Գիտելիքներ SSE- ների կառուցվածքային տարրերի վերաբերյալ և գեոպորտալներից օգտվելու հմտություններ
6.1	Բազային տարածական տեղեկատվություն, մետատվյալներ	2	0	3	
6.2	Գեոպորտալներ. ռեգիոնալ և ազգային գեոպորտալներ:	2	2	5	
Թեմա 7	Տվյալների Ստանդարտավորո ւմ և բարձր հաշվողական ռեսուրսների կիրառումը SSE- ում	4	0	8	Գիտելիքներ տվյալների միջազգային ստանդարտների վերաբերյալ
7.1	OGC և ISO ստանդարտներ	2	0	4	
7.2	WPS ստանդարտ. գործողությունների զուգահեռացում SSE-ում սուպերհամակարգ իչներ:	2	0	4	
Թեմա 8	Համաշխարհային SSE և միջազգային կազմակերպություն	4	0	8	Գիտելիքներ Համաշխարհային SSE-ների, SSE

	ններ				կազմման համաշխարհային և ազգային օրենսդրության և միջազգային կազմակերպությունների վերաբերյալ
8.1	Երկրի մակերևույթի գնման համաշխարհային խումբ (GEO) և INSPIRE Եվրամիության Տարածական Տվյալների Ենթակառուցվածք	2	0	4	
8.2	Համաշխարհային բնական ռեսուրսների և շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության դասակարգում, դասակարգման սխեմաներ (GRID և CORINE)	2	0	4	
Ընդամենը՝ 90 ժամ, 3 կրեդիտ		24	8	58	

### Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

Քննության տեսակը	Միավոր
1. Առաջին միջանկյալ	0-4

2. Երկրորդ միջանկյալ	0-4
3. Եզրափակիչ քննություն	0-10
<b>Հաճախում</b>	<b>Միավոր</b>
Դասահաճախում և ակտիվություն	0-2

**04/M09. Շրջակա միջավայրի երկրաքիմիա (3 կրեդիտ)**

*Շարափական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է մագիստրանտներին ծանոթացնել երկրաքիմիական հիմնարար պրոցեսների, երևույթների, հետազոտության երկրաքիմիական մեթոդների և առանձնահատկությունների հետ, տալ անհրաժեշտ տեսական և կիրառական գիտելիքներ և հմտություններ շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչների աղտոտման ուղիների, տեսակների, մասշտաբների, մակարդակների, վտանգի և ռիսկի գնահատման համար: Այն հնարավորություն կտա ծանոթանալ նաև շրջակա միջավայրի աղտոտման մակարդակների նվազմանն ուղղված հնարավոր միջոցառումներին: Ստացված գիտելիքները կարևոր են բնական, երկրի և շրջակա միջավայրի մասին գիտությունների լայն սպեկտրի մասնագետների համար:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1.կիմանա** «Շրջակա միջավայրի երկրաքիմիա» դասընթացի հիմունքները, մեթոդաբանական հիմքը, երկրաքիմիական երևույթների և պրոցեսների ձևավորման առանձնահատկությունները: Երկրաքիմիական գիտելիքների կիրառման հիմնական ոլորտները,

**2.կտիրապետի** շրջակա միջավայրի երկրաքիմիական հետազոտությունների մեթոդներին,

**3.կկարողանա** իրականացնել հետազոտություններ և վերլուծել ու գնահատել նմանատիպ այլ հետազոտությունների արդյունքներ:

**Բովանդակությունը.**

N	Բաժինը, թեման	Պարապունքների տիպը, ժամերի թիվը			Վերջնարդյունք
		Դասախոսություն	Սեմինար, գործնական	Ինքնուրույն	
<b>Թեմա 1</b>	<b>«Շրջակա միջավայրի երկրաքիմիա» գիտության և դասընթացի ներածական</b>	<b>3</b>	<b>0</b>	<b>2</b>	Գիտելիք առարկայի դասավանդման և շրջակա միջավայրի երկրաքիմիայի ծագման
1.1.	Դասընթացի ներածություն: «Շրջակա միջավայրի երկրաքիմիայի» ներածություն, տեղը և դերը գիտությունների համակար-	1	0	0	

	գում:				ու
1.2.	Մեթոդաբանությունը և մոտեցումները, հետազոտության օբյեկտը, առարկան, գիտական նպատակը, գիտակիրառական խնդիրները, ծագման պատմական ամփոփ ակնարկ:	2	0	2	զարգացման ու դերի մասին
<b>Թեմա 2</b>	<b>Դասընթացում կիրառվող հիմնական հասկացությունները և դրույթները</b>	<b>3</b>	<b>1</b>	<b>4</b>	Գիտելիք առարկային վերաբերող հասկացական և հիմնական մեթաբանական դրույթների մասին
2.1.	Կենսոլորտ, բաղադրիչները և կառուցվածքային միավորները: Կենսոլորտի և դրա բաղադրիչների երկրաքիմիա: Կենսոլորտ-լանդշաֆտ-էկոհամակարգ-շրջակա միջավայր հասկացությունների երկրաքիմիական բովանդակությունը:	2	0	2	
2.2.	Տեխնոգենեզ, անթրոպոգենեզ, դրա գլոբալ, ռեգիոնալ և լոկալ դրսևորումները: Գաղափար նոոսֆերայի և անթրոպոսֆերայի մասին և դրա էկոլոգիական դրսևորումները: Շրջակա միջավայրի երկրաքիմիայի հիմնական կանոնները և դրույթները: Սեմինար անցած նյութի վերաբերյալ:	1	1	2	
<b>Թեմա 3</b>	<b>Շրջակա միջավայրի աղտոտումը՝ որպես երկրաքիմիական երևույթ</b>	<b>4</b>	<b>2</b>	<b>6</b>	Գիտելիք շրջակա միջավայրի աղտոտման, աղտոտիչների, տարրերի հատկությունների և դասակարգման, բնական
3.1.	Շրջակա միջավայրի աղտոտում, հասկացություն, գլոբալ և լոկալ աղտոտում ու աղտոտիչներ, աղտոտման հիմնական տեսակները, աղբյուրները, ուղիները, աղտոտիչների հիմնական տեսակները և առանձնահատկությունները:	2	0	2	

3.2.	Տարրերի երկրաքիմիական դասակարգում: Լոկալ, գլոբալ ցիկլեր: Կենսական անհրաժեշտության և տոքսիկ տարրեր, սինթեզիզմի և անտագոնիզմի: Մեմինար թեմայի վերաբերյալ ինքնուրույն աշխատանքի հանձնում:	1	1	2	և տեխնոգեն մարզերի մասին
3.3.	Բնական և տեխնոգեն կենսաերկրաքիմիական պրովինցիաներ և էնդեմիա, հիմնական առանձնահատկությունները, քիմիական տարրերի ավելցուկ և պակաս: Մեմինար-գիտաժողով:	1	1	2	
<b>Թեմա 4</b>	<b>Շրջակա միջավայրի երկրաքիմիայում կիրառվող համագիտական և բուն գիտական հետազոտական մեթոդներ</b>	<b>5</b>	<b>1</b>	<b>13</b>	Հնտություն երկրաքիմիական տվյալների ստացման, մշակման, էկոլոգիական և առողջական ն ռիսկերի գնահատման համար
4.1.	Շրջակա միջավայրի երկրաքիմիական հետազոտություններում կիրառվող համագիտական և բուն գիտական հետազոտական մեթոդները, հետազոտությունների մեթոդական առանձնահատկությունները	1	0	3	
4.2.	Հետազոտության փուլերը, բովանդակությունը, առանձնահատկությունները, ստանդարտ օպերացիոն ընթացակարգեր:	2	0	3	
4.3.	Էկոլոգաերկրաքիմիական տվյալների բազա, դրանց ստեղծումը և առանձնահատկությունները, երկրաքիմիական ցուցանիշների հաշվարկում: Տարածքների էկոլոգաերկրաքիմիական քարտեզագրում, ԱՏՀ տեխնոլոգիաների կիրառումը երկրաքիմիական հետազո-	1	0	3	

	տություններում:				
4.4.	Տարածքների էկոլոգատերկրաքիմիական և սանիտարահիգենիկ գնահատում, բնակչության շրջանում ռիսկի խմբերի առանձնացում: Էկոլոգիական և առողջության ռիսկի գնահատում: Գործնական` ցուցանիշների հաշվարկում և գնահատում:	1	1	4	
<b>Թեմա 5</b>	<b>Տարբեր ֆունկցիոնալ տարածքների երկրաքիմիական առանձնահատկությունները և դրանց ուսումնասիրումը</b>	<b>3</b>	1	9	Գիտելիք և հմտություն ֆունկցիոնալ տարբեր տարածքներ ի էկոլոտերկրաքիմիական իրավիճակի բացահայտման ոլորտում
5.1.	Քաղաքային տարածքների էկոլոգատերկրաքիմիական առանձնահատկությունները` օրինակներ աշխարհից և ՀՀ-ից:	1	0	3	
5.2.	Հանքալեռնային տարածքների էկոլոգատերկրաքիմիական առանձնահատկությունները` օրինակներ աշխարհից և ՀՀ-ից:	1	0	3	
5.3.	Գյուղատնտեսական տարածքների էկոլոգատերկրաքիմիական առանձնահատկությունները` օրինակներ աշխարհից և ՀՀ-ից: Սեմինար` անցած թեմաներով սեմինար-գիտաժողով	1	1	3	
<b>Թեմա 6</b>	<b>ՀՀ տարածքի էկոլոգատերկրաքիմիական առանձնահատկությունները</b>	<b>6</b>	3	24	Գիտելիք ՀՀ էկոլոգատերկրաքիմիական և առանձնահատկությունների վերաբերյալ
6.1.	ՀՀ տարածքի էկոլոգատերկրաքիմիական գիտական դպրոցի պատմությունը: ՀՀ տարածքի էկոլոգատերկրաքիմիական առանձնահատկությունները: Ռեֆերատի բանավոր ներկայացում և գրավոր	2	1	8	

	հանձնում:				
6.2.	ՀՀ քաղաքների էկոլոգա-երկրաքիմիական ուսումնասիրությունները: Ռեֆերատի բանավոր ներկայացում և գրավոր հանձնում:	2	1	8	
6.3.	ՀՀ հանքալեռնային արդյունաբերական տարածքների էկոլոգաերկրաքիմիական ուսումնասիրություններ: Ռեֆերատի բանավոր ներկայացում և գրավոր հանձնում:	2	1	8	
<b>Ընդամենը՝ 90 ժամ, որից 24 դասախոսություն, 8 սեմինար,գործնական, 58 ինքնություն</b>		24	8	58	

### Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

Քննության տեսակը	Միավոր
1. Առաջին միջանկյալ	0-4
2. Երկրորդ միջանկյալ	0-4
3. Եզրափակիչ քննություն	0-10
Հաճախում	Միավոր
Դասահաճախում և ակտիվություն	0-2

**04/M10. Էկոլոգիական մոնիթորինգ և չափիչ սարքեր (4 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է մագիստրանտի մոտ ձևավորել գիտելիքներ շրջակա միջավայրի մոնիթորինգի համակարգի, դրա նշանակության, վերահսկման համակարգի ու մեթոդների, արդիական չափիչ սարքավորումների մասին, ինչպես նաև դաշտային և լաբորատոր պայմաններում որոշ չափումներ կատարելու ունակություններ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

**1.Գիմանա** շրջակա միջավայրի մոնիթորինգի, նրա մակարդակների, կազմավորման սկզբունքների, մոնիթորինգի համակարգում կիրառվող ՀՀ և միջազգային ստանդարտների, մոնիթորինգի անալիտիկ ապահովման, կիրառվող հիմնական անալիտիկ մեթոդների և սարքավորումների մասին,

**2.կտիրապետի** բնագիտական հետազոտությունները պլանավորելու, շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչների նմուշառման, in situ չափումներ կատարելու, հետազոտությունների արդյունքների վիճակագրական վերլուծության հմտություններին և շրջակա միջավայրի բաղադրիչների աղտոտման գնահատման մեթոդներին:

**3.կկարողանա** նախագծել նմուշառման ցանց, ընտրել նմուշառման մեթոդը, իրականացնել շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչների նմուշառում, in situ չափումներ, կատարել անալիտիկ մեթոդի ընտրություն, ստացված արդյունքների վիճակագրական վերլուծություն և շրջակա միջավայրի բաղադրիչների աղտոտման գնահատում:

**Բովանդակությունը.**

N	Բաժինը, թեման	Պարապունքների տիպը, ժամերի թիվը			Վերջնարդյունք
		Դասա-խոսու-թյուն	Սեմինար գործնական	Ինքնուրույն	
Թեմա 1	ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ				
	Էկոլոգիական մոնիթորինգի սահմանումը և դրա զարգացման հակիրճ պատմությունը և տրամաբանական սխեման: Հասկացություն կենսոլորտի մասին	2		6	Գիտելիքներ Էկոլոգիական մոնիթորինգի մակարդակներ ի, դրանց հիերարխիայի, կազմավորման սկզբունքների մասին
Թեմա 2	Նմուշառման հիմունքներ				

	<p>Նմուշառումը Էկոլոգիական մոնիթորինգային ծրագ- րերում: Բնագիտական հետազոտության հիմնական փուլերը և մեթոդները՝ կոնտակտային, հեռազննման և կենսաբանական: Պոպուլյացիա, ընտրանք, նմուշ և նմուշառում: Նմուշառման ծավալները սահմանափակող հիմնական գործոններ: Դաշտային աշխատանքների պլանավորում: Նմուշառկման պլան (նախագիծ): Պատահական, համակարգված, ստրատիֆիկացված, ադապտացված կլաստերային բաղադրյալ նմուշառում: Որակի ապահովումն ու վերահսկողությունը նմուշառման աշխատանքների</p>	2		6	Ունակությունն էր նախագծել նմուշառման ցանց
<b>Թեմա 3</b>	<b>Մոնիթորինգի անալիտիկ ապահովում</b>				
	<p>Անալիտիկ սարքավորման կիրառում Էկոլոգիական մոնիթորինգի ծրագրերում: Շրջակա միջավայրի աղտոտիչներ և վերահսկվող ցուցանիշներ: Անալիտիկ սարքավորման հիմնական բնութագրիչներ: Ստացիոնար և շարժա- կան անալիտիկ սարքավորում: Օդի պասիվ և ակտիվ նմու-</p>	2		8	Ունակությունն էր մոնիթորինգային և ծրագրի նպատակներին համապատասխան անալիտիկ մեթոդի ընտրություն

	<p>շառիչներ: Տարրալուծման քիմիական, ֆիզիկական և ֆիզիկաքիմիական մեթոդներ: Գրավիմետրիա և տիտրիմետրիա: Սպեկտրաչափություն: Քրոմատոգրաֆիա:</p>				
<b>Թեմա 4</b>	<b>Բազային (Ֆոնային) մոնիթորինգ</b>				
	<p>Կենսատերկրաքիմիական մարզեր: Սանիտարահիգիենիկ նորավորում: Բնական ֆոն: Ֆոնային մոնիթորինգ. անհրաժեշտությունը, խնդիրները և միջոցները: Ազգային ֆոնային մոնիթորինգի խնդիրները: Երկրակեղևի կլարկներ, տեղական և տարածաշրջանային ֆոն, կարգաշեղում, աղտոտման գոտիներ, բնական և տեխնածին կարգաշեղումներ: Կենսատերկրաքիմիական մարզեր: Տեխնածին կարգաշեղումներ:</p>	2		8	Գիտելիքներ Էկոլոգիական մոնիթորինգի համակարգում կիրառվող ՀՀ և միջազգային ստանդարտներ ի մասին, ՀՀ-ում առկա կենսատերկրաքիմիական մարզերի մասին
<b>Թեմա 5</b>	<b>Մթնոլորտային օդի մոնիթորինգ</b>				
	<p>Մթնոլորտային օդի կազմը, աղտոտման հիմնական աղբյուրները և հիմնական աղտոտիչները, որակի ստանդարտները: Մթնոլորտի աղտոտման դիտումների կազմակերպում: Մթնոլորտային օդի նմուշառում և աղտոտիչների պարունակության անմիջական չափումներ: Մթնոլոր-</p>	2	2	10	Գիտելիքներ մթնոլորտային օդի հիմնական աղտոտիչների մասին, մթնոլորտային փոշու ասպիրացիայի ունակություններ

	տային օդի աղտոտման հետազոտություններ՝ ինդիկատորների օգնությամբ: Չնաձայնակի հանույթի արդյունքների վերլուծություն:				
<b>Թեմա 6</b>	<b>Մակերևութային ջրերի մոնիթորինգ</b>				
	Ջրոլորտի կազմը, աղտոտման հիմնական աղբյուրները և աղտոտիչները: Վերահսկվող հիմնական ցուցանիշներն ու աղտոտիչները: Ջրօգտագործման կատեգորիաների նորմավորման առանձնահատկությունները: Ջրերի ֆիզիկաքիմիական հիմնական պարամետրեր: Չափումներ in situ Ջրերի նմուշառում: Ծովերի և լճերի ջրերի նմուշառում: Ջրահոսքերի ջրերի նմուշառում: Նմուշառկման տարա, կոնսերվացնող ազենտներ: Բնական ջրերի իոնային կազմ: Բնական ջրահոսքեր, կենդանի կտրվածք, ջրահոսքի արագություն և ջրի ծախս: Աղտոտիչների տեղափոխման ծավալների գնահատում:	4	2	8	Գիտելիքներ մակերևութային ջրերի հիմնական աղտոտիչների մասին, գետի ջրի նմուշառման ունակություններ, ջրի որոշ ցուցանիշների in situ չափումների կարողություններ
<b>Թեմա 7</b>	<b>Հատակային և հունային նստվածքների մոնիթորինգ</b>				
	Հատակային նստվածքների առաջացումն առաջացումները Տեխսածին հատակային	2		8	Գիտելիքներ հատակային նստվածքների հիմնական աղտոտիչների

	<p>նստվածքներ:          Հատակային նստվածքները որպես դեպոնենտ համակարգեր:          Աղտոտման հիմնական աղբյուրները և աղտոտիչները:          Հատակային նստվածքների նմուշառումը ջրահոսքերից, ջրամբարներից, լճերից:</p>				<p>մասին, հատակային նստվածքների նմուշառման կարողություններ</p>
<b>Թեմա 8</b>	<b>Բնական հողային ծածկույթի մոնիթորինգ</b>				
	<p>Հողերի կազմը, հողերի տիպերը, հողային պրոֆիլ: Հողերի երկրաքիմիական ֆոն: Հողօգտագործման հիմնական տիպեր: Հողերի աղտոտման հիմնական աղբյուրներ և աղտոտիչներ, վերահսկվող հիամնական ցուցանիշներ: Հողերի սանիտարահիգիենիկ նորմավորման համակարգը: Հողերի նմուշառման մեթոդներ: Գյուղատնտեսական հողերի որակի մոնիթորինգ: Բնակավայրերի հողերի որակի մոնիթորինգ: Հողային հանույթ, երկրաքիմիական քարտեզներ: Հողերի տարրալուծման արդյունքների վերլուծություն, աղտոտման մակարդակի երկրաքիմիական և սանիտարահիգիենիկ գնահատում:</p>	4	2	8	<p>Գիտելիքներ հողային ծածկույթի հիմնական աղտոտիչների մասին, հողի նմուշառման կարողություններ, հողի որոշ ցուցանիշների in situ չափումների կարողություններ</p>
<b>Թեմա 9</b>	<b>Կենսաբանական մոնիթորինգ և</b>				

	<b>Կենսաինդիկացիա</b>				
	Կենսաբանական մոնիթորինգի հիմնական խնդիրները: Կենսաինդիկատորների հիմնական հատկությունները: Մարդու ինդիկացիոն միջավայրեր: Կենսաանաբորեն թույլատրելի մակարդակներ:	2	2	12	Գիտելիքներ կենսամոնիթորինգի և կենսաինդիկացիայի մեթոդների մասին, մարդու կենսաինդիկացիոն միջավայրերի ոչ ինվազիվ նմուշառման կարողություններ
<b>Թեմա 10</b>	<b>Տվյալների վերլուծություն Էկոլոգիական մոնիթորինգային ծրագրերում</b>				
	Տվյալների հենքի ստեղծման սկզբունքները և համակարգչային ծրագրեր: Ընտրանք և պոպուլյացիա: Հիմնական նկարագրական վիճակագրական պարամետրեր: Ընտրանքում պարամետրի արժեքների բաշխվածության օրենքներ: Երևույթների միջև կապի հայտնաբերման և գնահատման վիճակագրական մեթոդներ: Կոռելյացիոն վերլուծություն: Երևույթների և պարամետրերի դասակարգում վիճակագրական մեթոդներով: Կլաստերային վերլուծություն: Վիճակագրական մեթոդների կիրառում տվյալների տեսանելիացման համար: Գծապատ-	2		14	Տվյալների հենքի նախագծման կարողություններ, արդյունքների վիճակագրական վերլուծության հմտություններ

	կերներ, դիագրամներ, քարտեզներ:				
<b>Ընդամենը՝</b>	<b>120 ժամ, 4 կրեդիտ</b>	24	8	88	

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

<b>Քննության տեսակը</b>	<b>Միավոր</b>
1. Առաջին միջանկյալ	0-4
2. Երկրորդ միջանկյալ	0-4
3. Եզրափակիչ քննություն	0-10
<b>Հաճախում</b>	<b>Միավոր</b>
Դասահաճախում և ակտիվություն	0-2

**04/M14. Էկոթունաբանություն (4 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է՝ մագիստրանտներին ծանոթացնել շրջակա միջավայրի և գյուղատնտեսական մթերքների հիմնական տոքսիկանտներին (թունանյութերին), մարդու օրգանիզմի համար դրանց կողմնակի ազդեցություններին և ռիսկերին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** շրջակա միջավայրի հիմնական տոքսիկանտների տեսակները, վերջիններիս հատկությունները և թունավոր (կողմնակի) ազդեցության տեսակներն ու մակարդակները,

**2. կհասկանա** կենդանի օրգանիզմի վրա տոքսիկանտների և շրջակա միջավայրի աղտոտիչների թունավոր ազդեցության մեխանիզմները, ինչպես նաև դոզա-պատասխան հարաբերակցությունը,

**3. կտիրապետի** մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա տոքսիկանտների կողմնակի ազդեցությունների նվազեցման և կանխարգելման հիմնական կանոններին ու սկզբունքներին:

**Բովանդակությունը.**

N	Բաժինը, թեման	Պարապունքների տիպը, ժամերի թիվը			Վերջնարդյունք
		Դասախոսություն	Սեմինար, գործնական	Ինքնուրույն	
<b>Թեմա 1</b>	<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ:</b> Էկոթունաբանություն առարկան, նշանակությունը և խնդիրները:	2		6	Էկոթունաբանության զարգացման պատմության իմացություն:
<b>Թեմա 2</b>	Ընդհանուր թունաբանության հիմունքները: Թունաբանության տերմինաբանություն:	2		8	Թունաբանության հիմնական սկզբունքների և տերմինների իմացություն:
<b>Թեմա 3</b>	Թունավոր նյութերի դասակարգումը:	2		6	Թունայութերի հիմնական տեսակների վերաբերյալ գիտելիք:
	Շրջակա միջավայրի թունանյութերի հիմնական տեսակները:		2	4	
<b>Թեմա 4</b>	Քսենոբիոտիկների թունավոր ազդեցության մեխանիզմները:	2		6	Թունանյութերի էքսպոզիցիայի (ներգործություն) ուղիների վերաբերյալ գիտելիքներ:
	Քսենոբիոտիկների թունավոր ազդեցության տեսակներն ու մակարդակները:	2		6	
<b>Թեմա 5</b>	Թունանյութերի դոզապատասխան հարաբերակցությունը:	2		6	Նյութի դոզայի և օրգանիզմի պատասխանի վրա ազդող գործոնների վերաբերյալ գիտելիք:
	Թունանյութերի դոզապատասխան հարաբերակցության տվյալների մեկնաբանումը:		2	4	
<b>Թեմա 6</b>	Տոքսիկոդինամիկա:	2		4	Քսենոբիոտիկների թունավոր ազդեցության մեխանիզմների և տոքսիկոկինետիկ գործընթացների վերաբերյալ գիտելիք:
	Տոքսիկոկինետիկա:	4		6	
<b>Թեմա 7</b>	Թիրախային օրգանի թունաբանություն:	2		6	Տարբեր օրգանների վրա քսենոբիոտիկների

	Թիրախային օրգանի թունավորության օրինակներ:		2	6	ընտրողական թունավոր ազդեցության վերաբերյալ գիտելիք:
<b>Թեմա 8</b>	Տերատոգենություն, մուտագենություն և քաղցկեղածնություն:		2	6	Քսենոբիոտիկների տերատոգեն, մուտագեն և քաղցկեղածին ազդեցությունների վերաբերյալ գիտելիք:
<b>Թեմա 9</b>	Շրջակա միջավայրի աղտոտիչների թունաբանական բնութագիրը:		2	8	Շրջակա միջավայրի տարբեր աղտոտիչների վերաբերյալ թունաբանական տվյալների բազաներից օգտվելու կարողություն:
	Քսենոբիոտիկների թունաբանության վերաբերյալ տեղեկատվական շտեմարաններ:		2	6	
<b>Ընդամենը՝ 120 ժամ</b>			<b>24</b>	<b>8</b>	<b>88</b>

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

Քննության տեսակը	Միավոր
1. Առաջին միջանկյալ	0-4
2. Երկրորդ միջանկյալ	0-4
3. Եզրափակիչ քննություն	0-10

Հաճախում	Միավոր
Դասահաճախում	1
Ակտիվություն (այդ թվում ինքնուրույն աշխատանքի ներկայացում)	1

**04/M 18. Քաղաքային միջավայրի էկոլոգիա (4 կրեդիտ)**

Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց:

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ծանոթացնել մագիստրանտներին քաղաքային միջավայրի էկոլոգիական առանձնահատկությունների հետ, տալ գիտելիքներ քաղաքների էկոլոգիական հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ, սովորեցնել այդ բնագավառում կիրառվող ժամանակակից մեթոդներ և մոտեցումներ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. **կիրանա** քաղաքների ծագման, արդի վիճակի և զարգացման պատմությունը, քաղաքային միջավայրի էկոլոգիական հիմնահարցերը և առանձնահատկությունները, դրանց հետ կապված հիմնական հասկացությունները,
2. **կկարողանա** առանձնացնել քաղաքային միջավայրի էկոլոգիական խնդիրները և գտնել համապատասխան ուղիներ դրանց լուծման համար,
3. **կտիրապետի** քաղաքների խնդիրների վերաբերյալ միջառարկայական և ինտեգրացված բնույթի գիտելիքներին և ձեռք կբերի հմտություններ՝ մասնակցելու քաղաքներում ծագած էկոլոգիական խնդիրների լուծմանը:

**Բովանդակությունը.**

N	Բաժինը, թեման	Պարապյունքների տիպը, ժամերի թիվը			Վերջնարդյունք
		Դասախոսություն	Մեմինար, գործնական	Ինքնուրույն	
Թեմա 1	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ				
	ՔԱՂԱՔ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ 3	3	3	6	Հիմնական հասկացություններ, - ուրբեռէկոլոգիական հիմնախնդիրներ, առանձնահատկությունները: -Քաղաքների շրջակա միջավայրը
Թեմա 2	ՔԱՂԱՔԱՅԻՆ ԷԿՈԼՈԳԱԿԱՆ (1 ժամ)	1		4	- Քաղաք-էկոհամակարգ սահմանում, կազմ - Քաղաքային տնտեսություն, - Քաղաքների ռեսուրսօգտագործումը
Թեմա 3	ՔԱՂԱՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ (2 ժամ)	2	1	8	- Քաղաքային տարածքների ռելիեֆի մար-դածին փոփոխություններ, - քաղաքային

					տարածքի հողերը, - վտանգավոր երկրաբանական գործընթացները
<b>Թեմա 4</b>	<b>ՔԱՂԱՔԻ ՋՐԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ</b> (3 ժամ)	<b>3</b>	<b>1</b>	<b>6</b>	- ջրային օբյեկտների դասակարգում, օգտագ ործումը, վիճակի գնահատում, աղտոտումը և աղտոտման աղբյուրները, - ջրային օբյեկտների մաքրում և պահպանում
<b>Թեմա 5</b>	<b>ՔԱՂԱՔԻ ՕՂԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ</b> (3 ժամ)	<b>3</b>	<b>1</b>	<b>10</b>	մթնոլորտային օդի կազմ< քաղաքային մթնոլորտի աղտոտում, պահպանում, վերահսկում
<b>Թեմա 6</b>	<b>ՔԱՂԱՔԱՅԻՆ ՖԼՈՐԱՆ ԵՎ ՖԱՈՒՆԱՆ</b> (3 ժամ)	<b>3</b>	<b>1</b>	<b>8</b>	Ֆլորա և ֆաունա, դրանց նշանակությունը կենսա- երկրացենոզներ, կենսաինդիկացիա, կենսամոնիթորինգ
<b>Թեմա 7</b>	<b>ՔԱՂԱՔՆԵՐԻ ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱ Ն ՀԻՄՈՒՆՔՆԵՐ</b> ( 16 ժամ)	<b>2</b>	<b>1</b>	<b>20</b>	Բուսականության նշանակությունը  շրջակա միջավայրի գործոնները  Էկոլոգիական կայունություն  -Փազային աղտոտիչներ, քլոր, ազոտ, օզոն ծանր մետաղներ, Ֆիտոինդիկա- ցա

					<p>-կանաչ տնկարկների ստեղծման հիմնական սկզբունքները և գոտիները</p> <p>-Կանաչապատ-ման նախա-գրծման պայմանները</p> <p>-Կանաչ տնկարկների խմբավորումը</p> <p>-Կանաչապատ-ման նորմերը</p> <p>Կանաչ տարածքների մոնիթորինգ</p>
<b>Թեմա 8</b>	<b>ՄԱՐԴՈՒ ԷԿՈԼՈԳԻԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ</b>	<b>2</b>		<b>8</b>	Քաղաքային կյանքի դրական և բացասական կողմերը, բնակչության առողջություն և դրա պահպանման միջոցառումներ
<b>Թեմա 9</b>	<b>ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ</b> (2 ժամ)	<b>2</b>		<b>8</b>	թափոնների տեսակներ, հավաքագրում, հեռացում և ուտիլիզացիա
<b>Թեմա 10</b>	<b>ՔԱՂԱՔԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ</b> (2 ժամ)	<b>2</b>	<b>1</b>	<b>8</b>	Քաղաքների էկոլոգիական անվտանգություն և մոնիթորինգ, Քաղաքների բնօգտագործման էկոնոմիկա, էկոլոգիական աշխարհահայացք
<b>Թեմա 11</b>	<b>ՔԱՂԱՔՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅԱՆ</b>	<b>1</b>	<b>1</b>	<b>2</b>	հարմարվողականություն էկոլոգիական համատեղելիությունը,

	<b>ՊԱՅՄԱՆՆԵՐԸ</b> (2 ժամ)  11.1. Հարմարվողականության գոյատևման ռազմավարություն: 11.2. Քաղաքային և բնական միջավայրի էկոլոգիական համատեղելիությունը: 11.3. Շրջակա միջավայրի պահպանության մեթոդներ: 11.4. Քաղաքների զարգացումը ապագայում: 11.5. Քաղաքների կայուն զարգացման մոդելները:				Շրջակա միջավայրի պահպանության մեթոդներ, կայուն քաղաքների մոդելներ
<b>Շնորհանք՝ 4 կրեդիտ</b>	<b>120 ժամ,</b>	24	8	88	

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

<b>Քննության տեսակը</b>	<b>Միավոր</b>
1. Առաջին միջանկյալ	0-4
2. Երկրորդ միջանկյալ	0-4

3. Եզրափակիչ քննություն	0-10
<b>Հաճախում</b>	<b>Միավոր</b>
Դասահաճախում և ակտիվություն	0-2

**04/M59. Բնօգտագործման Էկոնոմիկա (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է մագիստրանտների մոտ ձևավորել գիտելիքներ բնապահպանական խնդիրների լուծման ուղղությամբ՝ տնտեսագիտության հիմնական սկզբունքների կիրառմամբ, ինչպես նաև երկրի կայուն զարգացման համակարգի կառավարման սկզբունքների մշակումը՝ «տնտեսվար հասարակության» հասնելու համար: Դրա հենքում են այնպիսի կարևորագույն սկզբունքներ, ինչպիսիք են Էկոհամակարգերի հնարավորությունների և էներգյալիական փաստարկների մեկնաբանումները:

**Կրթական արդյունքները.**

- 1. կատանա** մասնագիտական հաստատուն գիտելիքներ բնօգտագործման Էկոնոմիկայի հիմնահարցերի և շրջակա միջավայրի վերաբերյալ:
- 2. կկարողանա** ցուցաբերել մասնագիտական մոտեցում՝ տարածաշրջանային և միջազգային խնդիրների, արդյունավետ բնօգտագործման կառավարման վերաբերյալ:
- 3. կտիրապետի** բնապահպանական ռիսկերի գնահատման և խնդիրների լուծման հնարավոր միջոցառումների կիրառման ու էկոլոգիական վնասի կանխարգելման հմտություններին:

**Բովանդակությունը.**

N	Բաժինը, թեման	Պարապմունքի տիպը ժամերի թիվը			վերջնարդյունք
		դասախոսություն	սեմինար, գործնական	ինքնուրույն	
	<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b> Յուրաքանչյուր երկրի կայուն զարգացման համար կարևորվում են տնտեսության և բնապահպանական խնդիրների միջև եղած փոխհարաբերությունները, քանի որ Էկոլոգատնտեսակա ն զարգացումները որոշում են երկրի տնտեսական գործունեության արդյունավետությունը և ստեղծում պայմաններ				

	<p>հասարակության կենսագործունեության համար:</p> <p>Բնօգտագործման էկոնոմիկան գիտությունների տարբեր ուղղությունների սինթեզ է, որտեղ ուսումնասիրվում են էկոլոգիական և տնտեսական համակարգերի միջև առկա կապերը: Այս գիտական ուղղության մեջ միավորվել են ռեսուրսային տնտեսագիտության և էկոլոգիական ժամանակակից պատկերացումները, որտեղ մարդկային սպառումը դարձել է համակարգի տնտեսաէկոլոգիական կարևորագույն մասնաբաժինը:</p>				
<b>Թեմա 1</b>	<p>Շնչհանուր էկոլոգիայի հիմունքները</p>	2			<p>Էկոլոգիայի՝ որպես գիտություն ծագման և զարգացման պատմությունը, կենսոլորտ, էկոլոգիայի հիմնական օրենքներն ու սկզբունքները:</p>
<b>Թեմա 2</b>	<p>Բնական պայմանները և ռեսուրսները որպես տնտեսության զարգացման փաստարկներ</p>	2	2	10	<p>Բնական պայմաններն և բնական ռեսուրսները հասկացնող յուրահատուկ տնտեսական էնլթյունը:</p>
<b>Թեմա 3</b>	<p>Շրջակա միջավայրի պահպանության էկոլոգատնտեսական</p>	2			<p>Բնություն պահպանություն</p> <p>ապահովման տնտեսական</p>

	խնդիրները:				մ Ե խ ան ի գ մ ը
<b>Թեմա 4</b>	Օդային ավազանի էկոլոգիական խնդիրները	2		10	օ դ ա յ ի ն ա վ ա գ ա ն ի է կ ո լ ո գ ա տ ն տ Ե ս ա կ ա ն ն շ ա ն ա կ ո լ թ յ ո լ Ն ը , Ե ռ կ ը ի օ դ ա յ ի ն ռ Ե ս ո լ ը ս ն Ե ր ի գ ն ա հ ա տ ո լ մ ը ,
<b>Թեմա 5</b>	Ջրային ավազանի էկոլոգիական խնդիրները	2	2		Ջ ը ա յ ի ն ա վ ա գ ա ն ի է կ ո լ ո գ ա տ ն տ Ե ս ա կ ա ն ն շ ա ն ա կ ո լ թ յ ո լ Ն ը , Ե ռ կ ը ի ջ ը ա յ ի ն ռ Ե ս ո լ ը ս ն Ե ր ի գ ն ա հ ա տ ո լ մ ը
<b>Թեմա 6</b>	Հողոլորտի էկոլոգիական խնդիրները	2			Հ ո ղ ը , ո ը ա Ե ս ա ը տ ա դ ը ո լ թ յ ա ն մ ի ջ ո ց , Ե ռ կ ը ի հ ո ղ ա յ ի ն ռ Ե ս ո լ ը ս ն Ե ր ը
<b>Թեմա 7</b>	Բնապահպանական և բնօգտագործման համակարգի գործունեությունը	2	2		Պ Ե տ ա կ ա ն կ ա ռ ա վ ա ը ո լ մ , պ լ ա ն ա վ ո ը ո լ մ , բ ն օ գ տ ա գ ո ը ծ մ ա ն կ ա ն խ ա տ Ե ս մ ա ն ն շ ա ն ա կ ո լ թ յ ո լ Ն ը
<b>Թեմա 8</b>	Բնապահպանական և բնօգտագործման կառավարումը	2			Բ ն ա պ ա հ պ ա ն ա կ ա ն կ ա ռ ա վ ա ը ո լ մ մ Ե խ ան ի գ մ ը , մ Ե թ ո դ ն Ե ը և Ֆ ո լ Ն կ ց ի ա ն :
<b>Թեմա 9</b>	Տեխնաձին գործունեության պատմական ակնարկ	2			Բ ն ա կ ա ն պ ա շ ա ը ն Ե ը ի ս պ ա ռ ո լ մ , ա ղ տ ո տ ի չ ն Ե ր ի

					դասակարգումը, բնութայան հասարակություն փոխազդեցություն արդյունքները
<b>Թեմա 10</b>	Բնական միջավայրի վրա անթրոպոգեն ազդեցության վնասի էկոնոմիկական գնահատականները	2		20	քիմիական նյութերի տարածում, կոտակում, քաղաքային և անդաժտի հիմնախնդիրները:
<b>Թեմա 11</b>	Բնապահպանական ծախսումների տնտեսական հիմնավորումը	2	2		բնապահպանական ծախսերի տնտեսական էությունը, կանխման ծախսերը և տնտեսական վնասը:
<b>Թեմա 12</b>	Բնապահպանական գործունեության տնտեսական և սոցիալական արդյունավետությունը	2		18	էկոլոգիական ծախսումները էկոնոմիկական արդյունավետություն հիմնական գնահատականները
		<b>24</b>	<b>8</b>	<b>58</b>	
<b>ԸՆԴԱՄԵՆԸ` 90 ժամ, 4 կրեդիտ</b>					

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,

- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

Քննության տեսակը	Միավոր
1. Առաջին միջանկյալ	0-4
2. Երկրորդ միջանկյալ	0-4
3. Եզրափակիչ քննություն	0-10
Հաճախում	Միավոր
Դասահաճախում և ակտիվություն	0-2

**04/M 61 Շրջակա միջավայրի ռադիացիոն պաշտպանություն (4 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց:*

**Նպատակը.**

ուսանողների մոտ գիտելիքներ ձևավորել շրջակա միջավայրում բնական և արհեստական ռադիոակտիվության, ռադիոակտիվ նյութերի կիրառության ու դրա բնապահպանական հետևանքների, ռադիացիոն պաշտպանության հիմունքների մասին, ծանոթացնել շրջակա միջավայրի ռադիոլոգիական մոնիթորինգում կիրառվող անալիտիկ մեթոդներին և սարքավորման աշխատանքին, մարդու անհատական կլանված դոզայի, արդյունաբար դոզայի և կոլեկտիվ դոզայի հաշվարկի ունակություններ ձևավորել:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. **Կիմանա** ռադիոակտիվ տրոհման օրենքը, տեսակները, ռադիոնուկլիդների հիմնական ցուցանիշները, իոնացնող ճառագայթման տեսակները և դրանց ազդեցությունը կենդանի նյութի վրա, ռադիոակտիվության չափման ընթացքում կիրառվող մեթոդների և ժամանակակից սարքավորման մասին բնական ռադիոակտիվության և այն տեխնոլոգիական գործընթացների մասին, որոնք հանգեցնում են բնական ռադիոակտիվ ֆոնի խախտմանը, հարստացված բնական և արհեստածին ռադիոնուկլիդների կիրառության մասին, ինչպես նաև կիրառության հետ կապված բնապահպանական հետևանքների մասին, շրջակա միջավայրի ռադիոլոգիական մոնիթորինգի կազմակերպման ու իրականացման մասին, շրջակա միջավայրի և մարդու ռադիացիոն պաշտպանության մասին
2. **Կկարողանա** օգտվել ռադիոնուկլիդների ռադիոակտիվ տրոհման ցուցանիշների տվյալների հենքերից օգտվել դոզիմետրիայի ոլորտում առկա տվյալների հենքերից, ընտրել ալֆա-, բետա- և գամմա-ճառագայթող ռադիոնուկլիդների համար որոշման տարրալուծման մեթոդը, տարբերել վտանգավոր ռադիոակտիվ աղբյուրները պատկան մարմիններին տեղյակ պահելու համար, ռադիոակտիվ աղբյուրի տեսակարար ակտիվության հիման վրա հաշվակել անհատական և կոլեկտիվ արդյունաբար դոզաները:
3. **Կտիրապետի** օդում կլանված դոզայի in situ չափումների կատարանը ,ժամանակի կամայական պահին ռադիոնուկլիդների տեսակարար ակտիվությունը հաշվարկին , բնակչության կլանված անհատական դոզայի հաշվարկին ,տարեկան արդյունաբար դոզայի հաշվարկին,

տարեկան արդյունարար կոլեկտիվ դոզայի հաշվարկին, ռադիոլոգիայի և դոզիմետրիայի ոլորտում առկա տվյալների հենքերի ինֆորմացիոն հարցումների կատարմանը:

**Բովանդակությունը.**

N	Բաժինը, թեման	Պարապունքների տիպը, ժամերի թիվը			Վերջնարդյունք
		Դասա- խոսու- թյուն	Սեմին- ար, գործնա- կան	Ինքնու- րույն	
<b>Թեմա 1</b>	<b>ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ: Ատոմի կառուցվածք: Ռադիոակտիվություն</b>				
	Ռադիոակտիվությունը որպես բնական երևույթ: Ռադիոակտիվության հայտնաբերման և ուսումնասիրության հակիրճ պատմական ակնարկ: Ատոմի կառուցվածք: Կայուն և ռադիոակտիվ իզոտոպներ: Ռադիոակտիվ տրոհման օրենքը, տրոհման հաստատուն, ռադիոնուկլիդի կյանքի տևողություն, կիսատրոհման պարբերություն: Ռադիոակտիվ աղբյուրի ակտիվություն Ռադիոակտիվ տրոհման տեսակները և իոնացնող ճառագայթում:	2		6	Գիտելիքներ ռադիոակտիվ տրոհման օրենքը, տեսակները, ռադիոնուկլիդների հիմնական ցուցանիշները
<b>Թեմա 2</b>	<b>Իոնացնող ճառագայթման փոխազդեցություն նյութի հետ և ազդեցությունը կենդանի օրգանիզմների վրա</b>				
